ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՉԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

21.04.2023 17:03



Փաստաբան Լևոն Բաղդասարյանն այսօր ՀՀ փաստաբանների պալատին տեղեկացրել է, որ դիմել են ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում քննվող քրեական վարույթով երկու անձանց՝ Արտակ Գալստյանի և Արման Մկրտումյանի պաշտպանությունը ստանձնելու համար, սակայն նախաքննական մարմինը չի ապահովում իր և փաստաբան Թադևոս Ալեքսանյանի ներգրավումը վարույթին:

Ընդ որում, ըստ փաստաբանի ներկայացրած տվյալների, քրեական վարույթին որպես մեղադրյալ ներգրավված նշված անձինք ազատությունից զրկված են, նրանցից մեկը չունի վարույթին մասնակից պաշտպան և զրկված է պաշտպանության իրավունքից ընդհանրապես:

Այս մասին տեղեկությունները տարածվել են նաև տեղեկատվության հանրային աղբյուրներում:
ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը հրատապ կարգով քննարկել է ներկայացրած հաղորդումը փաստաբանների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու համատեքստում:
Այդ կապակցությամբ Հանձնաժողովը՝

- իր մտահոգությունն է հայտնում փաստաբանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ շարունակվող հաղորդումների առնչությամբ, հիշեցնելով, որ այդպիսի գործելակերպն ուղղակիորեն վտանգում է անձանց սահմանադրությամբ երաշխավորված հիմնարար իրավունքները և ազատությունները,

- Իրավասու մարմիններին հորդորում է խստորեն հետևել օրենսդրական պահանջներին, հիշեցնելով, որ փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելն առաջացնում է քրեական պատասխանատվություն:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })